Գործ թիվ ԵԴ2/8673/02/23

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

26 հունիսի 2023թ. քաղաք Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Բաղիրյանս, քննության առնելով ըստ հայցի «Ռոքարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ընդդեմ պատասխանողներ ՀՀ ազգային ժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատվիրատուի որոշումն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Ռոքարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ պատասխանողներ ՀՀ ազգային ժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ խնդրելով անվավեր ճանաչել «Ռոքարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ ՀՀ ազգային ժողովի կողմից 27.01.2023թ. կայացված /ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23-1/ որոշումը, և որպես հետևանք՝ պարտավորեցնել ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ որպես լիազոր մարմին, «Ռոքարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը հանել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակից, անվավեր ճանաչել ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-23/1 ծածկագրով գնման գնահատող հանձնաժողովի թիվ 3 արձանագրության 9 և 10 կետերը:

Հայցադիմումը 20.06.2023 թվականին մակագրվել է դատավոր Ա. Բաղիրյանին, դատավորին է հանձնվել 26.06.2023 թվականին:

Հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121-րդ և 122-րդ հոդվածների պահանջներին համապատասխան, և առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ռոքարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն ընդդեմ պատասխանողներ ՀՀ ազգային ժողովի, ՀՀ ֆինանսների նախարարության՝ պատվիրատուի որոշումն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ա. ԲԱԴԻՐՅԱՆ**